ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՍՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ճարտարապետ, Հայաստանի վաստակավոր շինարար Սոս Մանուկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Իսահակյան փողոց h. 18ա հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ճարտարապետ, Հայաստանի վաստակավոր շինարար Սոս Մանուկյանը ծնվել է 1911թ. Ծովագյուղում:

1937 թվականին ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը:

1944-1985 թվականներին եղել է Հայարդնախագիծ ինստիտուտի ճարտարապետության արվեստանոցի ղեկավարը: Նա մեծ ներդրում ունի հայ ճարտարապետության զարգացման գործում: Նա անհատապես և որպես համահեղինակ մասնակցել է Էջմիածին, Սևան, Հրազդան քաղաքների և բազմաթիվ գյուղերի ու ավանների գլխավոր հատակագծերի մշակման աշխատանքներին:

Սոս Մանուկյանի նախագծերով Երևանում և հանրապետության տարբեր բնակավայրերում կառուցվել են բազմաթիվ բնակելի, հասարարական, արդյունաբերական շենքեր ու համալիրներ, ճարտարապետական փոքր ձևեր, որոնցից նշանակալիներն են՝ Էջմիածին քաղաքի, Երևանի «Կանազ» գործարանի մշակույթի պալատները, Իսահակյան փողոցի, Արշակունյաց, Կոմիտասի, Ազատության պողոտաների բնակելի շենքերը, ակումբներ Աշտարակ, Զեյվա, Սևան, Սպիտակ, Ծովագյուղ բնակավայրերում, բազմաթիվ արդյունաբերական հանգույցներ, որոնք կատարված են մասնագիտական բարձր վարպետությամբ և գեղարվեստական մեծ արտահայտչականությամբ՝ հավատարիմ մնալով հայ ճարտարապետության ավանդույթներին:

Սոս Մանուկյանը մահացել է 1985 թվականին:

Սոս Մանուկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակն Իսահակյան փողոց հ.18ա հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի ճարտարապետների պալատի նախագահ Մ. Մինասյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի

2-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Սոս Մանուկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Սոս Մանուկյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ